

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/8

16 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի 14.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 29.12.2015 թ-ի թիվ 5013354 ակտի դեմ:

Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Իսահակ Աբրահամյանը հայտնում է, որ 2015թ. դեկտեմբեր ամսին Շենգավիթի հարկային տեսչության կողմից իր արտադրամասում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգումը կատարվել է ոչ լիակատար և ոչ ճշմարիտ: Հայտնում է նաև, որ ստուգող ները ապացուցում էին, որ 2012-2015թ.թ.-ին մաքսագերծման ժամանակ թույլ են տրվել խախտումներ, հետաձգված գումարների հաշիվ-ապրանքագրերը չեն համապատասխանում ցույց տրված հաշվետվություններին, փրփրապլաստի վաճառքը կատարվել է մաքսային արժեքներից ցածր, որը չի համապատասխանում իրականությանը: Արդյունքում ներկայացվել է թիվ 5013354 Ակտը, որով նշանակվել է տուգանք 1.850.000 դրամի չափով:

Դեկտեմբերի 31-ին Ա/Ձ Իսահակ Աբրահամյանին կանչել են Շենգավիթի հարկային տեսչություն՝ ակտի օրինակը ստանալու համար: Ակտի օրինակը ստանալուց հետո ծանոթացել է ակտին, սակայն ԱԱՀ-ի խախտումների մասին ոչինչ չի հայտնաբերել: Ակտով արձանագրվել է եկամտահարկի գծով խախտումներ, որը չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Իսահակ Աբրահամյանը խնդրում է պարզաբանել ստեղծված իրավիճակը, նշանակել նոր ստուգում և ազատել թիվ 5013354 ակտում նշված պարտավորություններից:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 07.12.2015 թ-ի թիվ 5013354 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի մոտ իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 29.12.2015 թ-ի թիվ 5013354 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.046.668 դրամ:

Ակտի 24-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի կողմից ներկայացված հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի և հաշվարկի համադրումից պարզվեց, որ 2012թ.-ի եկամտահարկի

տարեկան հաշվարկում իրացման շրջանառությունը ֆիսկալ հասույթի նկատմամբ պակաս է հաշվարկվել 244388 դրամի չափով, իսկ 2013թ.-ի և 2014թ.-ի հարկվող եկամուտը հաշվարկելիս, խախտելով «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները, համախառն եկամտից ավել է նվազեցվել փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր, համապատասխանաբար՝ 2750000 դրամի և 3550000 դրամի չափով:

Նշված խախտումների հետևանքով պակաս եկամտային հարկ է հաշվարկվել համապատասխանաբար 48880 դրամ, 550000 դրամ և 710000 դրամ:

Արդյունքում, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածի դրույթները եկամտային հարկի գծով ենթակա է գանձման ընդամենը 2.046.668 դրամ:

Քննարկման ընթացքում Ա/Ձ Իսահակ Աբրահամյանը հայտարարեց, որ Ակտով եկամտային հարկի գծով առաջադրված լրացուցիչ պարտավորությունները հիմնավոր չեն: Մասնավորապես, Ակտի Ակտի 24-րդ կետով արձանագրվել է, որ 2013թ.-ի և 2014թ.-ի հարկվող եկամուտը հաշվարկելիս համախառն եկամտից ավել է նվազեցվել փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր, համապատասխանաբար՝ 2750000 դրամի և 3550000 դրամի չափով:

Ա/Ձ Իսահակ Աբրահամյանը Հանձնաժողովին ներկայացրեց 2013թ.-ին և 2014թ.-ին վերաբերող ծախսերը հիմնավորող փաստաթղթերը և հավաստիացրեց, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը կորող է համոզվել եկամտային հարկի գծով պարտավորությունները ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ արձանագրված լինելու մեջ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի կողմից ներկայացված 2013-2014թ.թ.-ին վերաբերող ծախսերը հիմնավորող փաստաթղթերը պարզել է, որ Ակտի 24-րդ կետում նշվածը՝ փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը համախառն եկամտից 2013թ.-ին 2750000 դրամի և 2014թ.-ին 3550000 դրամի ավել նվազեցված լինելու մասին, չի համապատասխանում իրականությանը:

Հանձնաժողովն արձանագրեց նաև, որ Ակտի 24-րդ կետում սխալ հղում է կատարվել այն իրավական նորմին, որի պահանջները չեն կատարվել: Այսինքն, Ակտը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված նորմի խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ակտի 24-րդ կետը ենթակա է չեղյալ համարման:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ ստուգված ժամանակաշրջանում պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների առկայության հարցը պարզաբանելու նպատակով Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի մոտ անհրաժեշտ է կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Նման պահանջ է բերված նաև Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի ներկայացված գանգատում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի

37-րդ հոդվածի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի բ) կետի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 29.12.2015 թ-ի թիվ 5013354 ակտը:
2. Միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարին Ա/Ձ Իսահակ Աբրահամյանի մոտ բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում կատարելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ